



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 նոյեմբերի 2014 թվականի N 1073-Ն
ք. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 818-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 12-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդը **ո ր ո շ ու մ է**.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2010 թվականի հոկտեմբերի 12-ի <<Քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու հավաստագիր ստանալու համար թեստավորում անցկացնելու և քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոն զբաղեցնելու կարգը սահմանելու մասին>> N 818-Ն որոշմամբ սահմանված N 1 հավելվածում՝

1) 20-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

2) 21-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 21.1-ին կետով.

<<21.1. Թեստավորման հանձնաժողովը, թեստավորման ավարտից հետո արխիվացնում է յուրաքանչյուր խմբի համար ձևավորված թեստային առաջադրանքների մեկ օրինակը, իսկ մյուս օրինակները ոչնչացնում է:>>.

3) 33-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 33.1-ին կետով.

<<33.1. Եթե պարզվում է, որ թեստավորմանը մասնակցելու համար քաղաքացին Խորհրդի աշխատակազմ է ներկայացրել սույն կարգի 9-րդ կետի 2-րդ ենթակետով

նախատեսված իր անձնական տվյալների վերաբերյալ կեղծ տեղեկատվություն, քաղաքացու Հավաստագրի գործողությունը Խորհրդի որոշմամբ դադարեցվում է և քաղաքացին հանվում է Հավաստագիր ունեցող քաղաքացիների ցուցակից:>>.

4) 34-րդ կետը <<հայտարարություն>> բառից հետո լրացնել <<' քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար>> բառերով:

5) 37-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 37.1-ին կետով.

<<37.1. Սույն կարգի 37-րդ հոդվածով նախատեսված հիմքերով քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոնը չհամալրվելու դեպքում՝ քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հաջորդ հայտարարությունը համապատասխան մարմինը սույն կարգի 34-րդ կետով սահմանված կարգով հրապարակում է այդ ժամկետի ավարտին հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում կամ տեղեկացնելով Խորհրդին՝ հաջորդ թեստավորման ավարտից հետո հինգերորդ աշխատանքային օրվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում:>> բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

Մ. ԲԱԴԱԼՅԱՆ